



ՊՐՈՖ. ԴՈԿՏ. Ա. Գ. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

ՎԵՐԱԾՆՆԴԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*



րոֆ. Բյուզանդը իր ներածական խոսքում, ինչպես միշտ, այս անգամ ևս գունազարդված ներկայացրեց դասախոսությանս թեման և իմ վաստակը Վերածննդի հարցի ուսումնասիրության գործում: Թյուրիմացություն չստեղծելու համար, նախապես պիտի հայտնեմ ինձ ունկնդրող հարգելի հասարակության, որ ես տվյալ հարցի ուսումնասիրությամբ հանգամանորեն չեմ զբաղվել և այն տվյալները, ինչ պիտի բերեմ, մեծ մասամբ, իմ պրպտումների, իմ հետազոտությունների արդյունքը չեն, այլ օգտվել եմ մեզ մոտ հրատարակված ուսումնասիրություններից:

Վերածննդի հարցը միջնադարյան Հայաստանում— հայ ժողովրդի պատմության վիճելի հարցերից մեկն է. նա վերջերս է առաջ քաշվել և կարոտ է բաղմակողմանի ուսումնասիրության: Իմ ներկա դասախոսության նպատակն է ընդհանուր գծերով ծանոթացնել ձեզ դասախոսվող թեմայի էության հետ և միաժամանակ նշել դրական այն աշխատանքը, որ կատարվել է և կատարվում է մեզ մոտ՝ Սովետական Հայաստանում այդ ուղղությամբ:

Անշուշտ, դուք պատկերացնում եք հարցի կարևորությունը և այժմեականությունը: Խոսքը, վերջին հաշվով, մեր ժողովրդի մշակույթին և պատմությանը չի վերաբերում միայն, այլ արևելյան հնագույն ժոխովորդների մշակույթին և պատմությանը: Մտածելու լուրջ խնդիր է, թե արևելյան երկրները, որոնք մարդկային հոգևոր և նյութական մշակույթի օրրաններն են հանդիսացել, արդյոք միջին դարերում այնքա՞ն են հետ մնացել նվիրույթից, որ Վերածննդի հարցում առաջնությունը զիջեցին վերջինիս: Եթե մեր գիտնականներին հաջողվի պարզել, որ 10—13-րդ դարերում Հայաստանում և նրա հարևան երկրներում գոյություն է ունեցել Վերածնունդ, այսինքն՝ մի քանի դար ավելի կանուխ, քան նվիրույթում, այն դեպքում Վերածննդի առաջնությունը Արևմուտքից անցնում է Արևելքին:

Վերածննդի մասին հստակ գաղափար կազմելու համար նախ ես ուզում եմ կանգ առնել Ռենեսանս կամ Վերածնունդ բառի սահմանումի վրա, որովհետև այդ բառին տարբեր ուղղություն ունեցող գիտնականներ տարբեր սահմանում են տալիս: Այսպես, արևմտաեվրոպական գիտնականները 18-րդ դարում (Վոլտեր և ուրիշներ) Ռենեսանս ասելով հասկանում էին հին, անտիկ հունական և հռոմեական մշակույթի վերստեղծումը, վերածնունդը. անտիկ հասարակությունը, նրանց կարծիքով, մարդկային կուլտուրայի ծաղկումն էր, միջին դարերը՝ կուլտուրայի անկումը, իսկ 15-րդ դարից՝ անտիկ կուլտուրայի վերածնունդը:

* Անցյալ տարի դեկտեմբերի 14—19-ին Երևանում, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքում, կազմակերպվել է բանավեճ՝ նվիրված Վերածննդի հարցերին: Մեր ընթերցողներին այդ հետաքրքիր հարցի հետ ծանոթացնելու համար, ամհրաժեշտ ենք համարում «Էջմիածին» ամսագրի ներկա համարում տպագրել պրոֆ. Ա. Գ. Արրահամյանի իրենցիկ այս Կաթողիկոսության Անթիլիասի դպրեմանքի Կուլպենկյան սրահում 1955 թվականի փետրվարի 5-ին կարդացած դասախոսության սղագրությունը:— ԽՄԲ.:

Եվրոպական արդի գիտնականների մեծ մասը Վերածնունդը ասելով հասկանում է արևմտաեվրոպական ժողովուրդների 15—16-րդ դարերում ստեղծած կուլտուրան՝ ի տարբերություն միջնադարյան նախորդ, սխոլաստիկ կուլտուրայի, թեպետ և կան եվրոպական գիտնականներ, որոնք ընդհանրապես ժխտում են Վերածննդի գոյությունը։

Մեր գիտնականների Վերածննդին տված սահմանումը զգալիորեն տարբերվում է եվրոպական գիտնականների սահմանումից։ Վերածնունդը ասելով մենք հասկանում ենք այն մշակույթը, որն ստեղծվում է ավատական հասարակության վերջին փուլում, երբ սկսվում է քայքայվել այդ հասարակարգը և իր տեղը զիջել նոր ծնվող դրամատիկական (կապիտալիստական) հասարակարգին։ Ըստ որում, մենք Վերածննդի գաղափարը անխզելիորեն կապում ենք հասարակության սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետ և այն համարում նրա զարգացման որոշ աստիճանի օրինաչափ արտահայտությունը։



Նախքան բուն խնդրին անցնելը, մենք հարկադրված ենք փորքը-ինչ կանգ առնել հայ ժողովրդի պատմության բաժանումների հարցի վրա՝ կապված հասարակական-տնտեսական հարաբերությունների հետ, քանի որ առանց դրան— ձեզ հազար դժվար է ըմբռնել նաև Վերածննդի հարցը ըստ էության։

Հայ ժողովրդի պատմության բաժանումը մեզ մոտ կատարվում է ո՛չ այն ձևով, ինչ ձեզ մոտ է։ Ձեզ մոտ վերցնում են պատմությունը և հեշտությամբ բաժանում գերիշխող տիրակալությունների վրա՝ Արտաշեսյան շրջան, Արշակունյաց շրջան, Խալիֆայի շրջան և այլն, այլ խոսքով ասած, ձեզ մոտ բաժանման ելակետը քաղաքականն է։ Իսկ մեզ մոտ պատմության բաժանումը կատարվում է ըստ հասարակարգերի, ինչպես ընդունված է ասել՝ ըստ ֆորմացիաների։ Մարդկային հասարակությանը հայտնի են հետևյալ հինգ հասարակարգերը՝ նախադարյան-համայնական, ստրկատիրական, ֆեոդալական (ավատական), կապիտալիստական (դրամատիկական) և սոցիալիստական։

Մեր և ձեր պատմաբանների միջև գոյություն ունի և հայացքների հիմնական տարբերություն. ձեզ մոտ պատմության վրա նայում են որպես դեպքերի և իրադարձությունների անկապ և անօրինաչափ մի խառնարանի, իսկ մենք, հակառակը, պատմության մեջ օրինաչափություններ ենք տեսնում։ Ինչպես ֆիզիկան, քիմիան և մյուս գիտություններն ունեն իրենց օրինաչափությունները, այնպես էլ

պատմությունն ունի իր օրինաչափությունները։ Պատմական գիտության հիմնական խնդիրը հենց կայանում է նրանում, որ բացահայտի այդ օրինաչափությունները, անցյալի պատմության վերլուծման հիման վրա օգնի մեզ հասկանալու արդի ժամանակները և նախատեսի գալիքը։ Առանց իր այդ դերի, պատմությունը դադարում է գիտություն լինելուց։

Առաջին հայագետը, որ զբաղվել է հայ ժողովրդի տնտեսական կյանքի պատմության մեջ և աշխատել է գիտական հողի վրա դնել այն, հանդիսացել է պրոֆ. Ն. Ադոնցը։ Նա իր «Հայաստանը Հուստիանոսի օրոք» աշխատության մեջ, որ լույս է տեսել 1908 թվականին, աշխատել է պարզել՝ թե սոցիալ-տնտեսական ի՞նչ հարաբերություններ են եղել հին Հայաստանում և եկել է այն եզրակացության, որ հայ ժողովուրդը, արևմտյան եվրոպական ժողովուրդների նման, անցել է ավատական (ֆեոդալական) հասարակության վրայով— Արտաշեսյան և Արշակունյաց հարստության շրջաններում Հայաստանում իշխող տնտեսաձևը հանդիսացել է ավատականությունը (ֆեոդալիզմը)։ Նման կարծիքի է հանգել նաև ակադ. Զավախաշվիլին իր «Պետական կարգը հին Վրաստանում և Հայաստանում» աշխատության մեջ։

Այս հարցին ավելի հանգամանորեն անդրադարձել է ակադ. Հ. Մանանդյանը իր «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» արժեքավոր աշխատության մեջ, որը հրատարակվել է 1934 թվականին։ Հանգուցյալ ակադեմիկոսը, օգտագործելով հայկական կարևոր բոլոր սկզբնաղբյուրները, հաստատել է Ն. Ադոնցի տեսակետը՝ ավատականությունը հին Հայաստանում գերիշխող լինելու մասին։ Ավատական հարաբերությունների միջնադարյան Հայաստանում իշխող հանդիսանալու թեզը պաշտպանել է նաև պրոֆ. Խ. Սամվելյանը «Հին հայ իրավունքի պատմությունը» խորագրով իր աշխատության առաջին հատորում, թեպետ վերջինս ավատականության հետ միասին զգալի տեղ է տվել նաև ստրկատիրությանը։

Ուրարտագիտության զարգացման ղուգրն-թաց, հայ ժողովրդի պատմության գիտական ուսումնասիրությունն ավելի առաջ տարվեց, և ավատականության մասին քաղաքացիություն ստացած տեսակետը որոշ սրբազրության ենթարկվեց։ Պրոֆ. Բ. Բ. Պիտտովսկին իր մի շարք ուսումնասիրություններում, առանձնապես «Ուրարտուի պատմությունը և կուլտուրան» աշխատության մեջ, որ լույս է տեսել 1944 թվականին, գիտականորեն հաստատեց, որ հայ ժողովրդի պատմության ուրարտական շրջանը եղել է ո՛չ թե ավատական, այլ ստրկատիրական շրջան։

Պրոֆ. Պիոտրովսկու այս եզրակացության լույսի տակ, առաջ քաշվեց ստրկատիրության հարցը հին Հայաստանում. քանի որ Ուրարտուի պատմությունը սերտորեն կապված է հայ ժողովրդի պատմության հետ, որպես նրա նախաբնիկների պատմություն, ուստի և մենք էր եզրակացնել, որ Հայաստանի նախաբնիկները, ամբողջությամբ առած, տեղեկ են ստրկատիրական հասարակության վրայով:

Պրոֆ. Բ. Պիոտրովսկու այս տեսակետը ավելի հստակ, ամբողջականացված ձևով առաջ քաշեց և պաշտպանեց պատմական գիտությունների դոկտոր Ս. Երեմյանը: Մոսկվայում հրատարակվող «Հին պատմության տեղեկատու» մեջ նա հրատարակեց մի ուսումնասիրություն ստրկատիրության մասին և աշխատեց ապացուցել, որ հայ ժողովրդի պատմության Արտաշեսյան շրջանը ևս ստրկատիրության շրջան է հանդիսացել:

Նա, ի միջի այլոց, վերև հիշված հոդվածում փաստեց, որ Տիգրան Մեծի և նրա հաջորդների շրջանում Հայաստան բերված հարյուր հազարավոր գերիները բերվել են ո՛չ թե նրանց օգտագործելու առևտրի և արհեստագործության մեջ, ինչպես կարծվում է, այլ օգտագործելու ստրկական աշխատանքներում: Պլուտարքոսի մի տեղեկությունից հայտնի է, որ Հայաստան բերված գերիների մեջ կային մեծ թվով վրանաբնակ կիսավայրենի բեդլիներ, որոնք շատ հեռու էին առևտրականների և արհեստավորների լինելուց: Հայաստանը վաղուց ի վեր հայտնի էր իր առևտրականներով և արհեստավորներով. Հայաստանը ո՛չ թե ներմուծում, այլ արտահանում էր նման զբաղմունքի մարդիկ:

Ինչ վերաբերում է այն պատճառաբանությանը, թե ինչպես է, որ հայ մատենագիրները չեն խոսում Արտաշեսյան շրջանի մասին որպես ստրկատիրական հասարակության, այդ հարցին դոկտ. Ս. Երեմյանը հետևյալ համոզեցուցիչ պատասխանն է տալիս. հայ պատմիչները չէին կարող Արտաշեսյան շրջանի ստրկատիրության մասին խոսել, քանի որ նրանք ապրել են ավելի ուշ շրջանում, ավատական կյանքով, և, բնական է, որ նրանք Արտաշեսյան շրջանը պիտի պատկերացնեին այն ձևով, ինչ տեսել են իրենք անմիջապես իրենց շրջապատում:

Դոկտ. Ս. Երեմյանի այս տեսակետը լայն ընդունելություն է գտել հայագիտության մեջ, բայց այսօր տակավին կան պատմագետներ, որոնք համաձայն չեն Երեմյանի եզրակացությունների հետ (պրոֆ. Ս. Հակոբյան, դոց. Հ. Հարությունյան և ուրիշներ) և նրա կողմնակիցը համարում են անհամոզեցուցիչ:

Մեզ մոտ հայ ժողովրդի պատմությունը բաժանվում է հետևյալ շրջանների՝ նախա-դարյան-համայնական (հնագույն շրջանից մինչև 10-րդ դար նախքան մեր էրան), ստրկատիրական (9-րդ դարից մինչև 1-ին դար նախքան մեր էրան), վաղ ֆեոդալիզմի (վաղ ավատականության) (1-ին դարից մինչև 9-րդ դար), զարգացած ֆեոդալիզմի (10—13-րդ դարերը), ֆեոդալական հարաբերությունների լծացման (14—16-րդ դարերը) և, վերջապես, ֆեոդալական հասարակության քայքայման շրջան (17—18-րդ դարերը): 19-րդ դարից սկսվում է արդեն դրամատիրական հասարակությունը, որը նոր դարաշրջանի սկիզբ է հանդիսանում:

Վերածնունդը, թվարկված այս շրջաններից, հանդես է գալիս նախավերջին շրջանում՝ զարգացած ֆեոդալիզմի շրջանում: Պատմական գիտության կողմից, ինչպես ասացինք, ապացուցված է, որ այն ժամանակ, երբ ավատական հասարակությունը հասնում է իր զարգացման վերջին փուլին և պիտի քայքայվի ու իր տեղը զիջի ծնվող դրամատիրական նոր հասարակարգին, հանդես են գալիս գիտության, գրականության, արվեստի նոր և առաջադեմ ուղղություններ, որոնք և իրենց զաղափարական ամբողջության մեջ կոչվում են Վերածնունդ կամ Ռենեսանս: Այդ երևույթը ապացուցված է արևմտաեվրոպական մի շարք ժողովուրդների պատմության անվիճելի տվյալների հիման վրա: Ըստ որում, պիտի նկատի ունենալ, որ մշակույթը՝ նոր ծնվող հասարակության մշակույթն է և ճանապարհ է հարթում նրա զարգացման համար:

Մինչև վերջերս գիտության մեջ քաղաքացիություն ուներ այն կարծիքը, թե Վերածննդի առաջին դրոշակակիրները հանդիսացել են արևմտաեվրոպական ժողովուրդները, իսկ արևելյան ժողովուրդները, այդ թվում նաև հայ ժողովուրդը, կուրորեն հետևել են եվրոպացիներին: Բայց վերջերս այս տեսակետը սկսեց խախտվել պատմագիտական նոր ուսումնասիրությունների լույսի տակ:

Հայրենիքի մեր գիտնականներից այս տեսակետի դեմ առաջին անգամ հանդես եկավ պրոֆ. Մ. Աբեղյանը և առաջ քաշեց Վերածննդի հարցը միջնադարյան Հայաստանում իր երկու ուսումնասիրությունների մեջ՝ «Վերածնությունը հայոց հին գրականության մեջ» խորագրով հոդվածում, որ տպագրվել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի 1941 թվականի № 5—6 «Տեղականագրում» և «Հայոց հին գրականության պատմության» երկրորդ հատորում 1946 թվականին: Աբեղյանը պատմական նյութերի հիման վրա աշխատեց ապացուցել, որ Վերածնունդը Հայաստանում ավելի կանոն է

հանդես եկել, քան Արևմտյան Եվրոպայում: Այդ առթիվ նա գրում է. «Մինչդեռ քրիստոնեյա աշխարհի ուրիշ կողմերում գեո ընդհանրապես իշխում էր թանձր միջնադարը, 11-րդ դարի առաջին կեսին՝ մեր կյանքի և մտածողության մեջ մտել էր մի հեղաշրջում, որով կրոնա-ճգնափոխական ոգին տակավ առ տակավ տեղի էր տալիս մի ուրիշ ոգու դիմաց, և առաջ էր գալիս ինքնուրույն վերածնություն...»:

Պրոֆ. Մ. Արեղյանի առաջադրած այս հետաքրքրաշարժ թեզը ջերմ ընդունելություն գտավ մեր վրացագետ բարեկամների շրջանում: Այդ ուղղությամբ առաջին անգամ հանդես եկավ պրոֆ. Գ. Ի. Նուցուբիձեն իր «Ռուստավելի և արևելյան Ռենեսանս» խորագրով արժեքավոր աշխատությամբ, որը տպագրվեց Թբիլիսիում 1947 թվականին: Նրա այս աշխատության գլուխներից մեկը, այլ մշակությամբ, «Հայաստանը և արևելյան Ռենեսանսը» խորագրով, լույս է տեսել հայերեն «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրի 1941 թվականի № 12-ի մեջ (էջ 96—100): Պրոֆ. Նուցուբիձեն, հայկական և վրացական նյութերի հիման վրա, աշխատեց ապացուցել, որ Արևելքում, եվրոպացիներից առաջ, գոյություն է ունեցել Ռենեսանս և միջին դարերը մշակույթի զարգացման ընդհատում չի հանդիսացել, ինչպես կարծում են արևմտա-եվրոպական ժողովուրդները: Նուցուբիձեի կարծիքով, Հայաստանը 10-րդ դարում շնայած ապրեց նախառենեսանս, բայց չկարողացավ զարգանալ, որովհետև, քաղաքական նպաստավոր պայմաններ չեղան. Հայաստան ներխուժող հրոսակները ջարդեցին այն ճյուղերը, որոնց վրա պիտի ծաղկեր Վերածնունդը: Միայն 12-րդ դարում Հայաստանը մտավ Վերածննդի մեջ, յուրացրեց արևելյան Վերածննդի բոլոր տարրերը և շարունակեց մնալ Վերածննդի մեջ մինչև 14-րդ դարը:

Վերջին տարիներս Վերածննդի թեզի ջերմ պաշտպաններից մեկը հանդիսացավ պրոֆ. Վ. Չալոյանը, որն իր մի շարք ելույթներում և «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրի 1944 թվականի № 6—7-ի և 8-ի մեջ տպված «Վերածնություն շրջանի հայ փիլիսոփայության պատմության մասին» վերտառությամբ հոդվածում հաստատում է Վերածննդի գոյությունը Հայաստանում:

Անցյալ տարվա դեկտեմբեր ամսում, իմ արտասահման գալուց առաջ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքում տեղի էր ունենալու Վերածննդի հարցի քննարկումը, ուր պրոֆ. Վ. Չալոյանը պիտի հանդես գար Վերածննդի գոյությունը միջնադարյան Հայաստանում թեզով, իսկ պատ-

մական գիտությունների թեկնածուներ Լ. Խաչիկյանը և Բ. Առաքելյանը՝ ժխտական թեզերով: Այդ քննարկմանը, դժբախտաբար, ես ներկա չեմ գտնվել և չեմ կարող ձեռն ուղինչ ասել նրա արդյունքների մասին:



9-րդ դարի վերջերում, ինչպես հայտնի է, Հայաստանը դուրս եկավ Խալիֆաթի գերիշխանության տակից և վերականգնեց իր քաղաքական անկախությունը: Հայ ժողովուրդը դարեց իր վաստակի մի զգալի մասը օտարին վճարելուց որպես հարկատու ժողովուրդ և մնաց այդ երկրի ներքը: Քաղաքական բարենպաստ պայմանները հնարավորություն տվեցին Շիրակի Բագրատունիներին Արևելյան Հայաստանում կազմակերպել իր ժամանակի համար բավականին ուժեղ մի պետություն: Հայաստանի համար ստեղծվեց, համեմատաբար, խաղաղության մի երկար շրջան, որ տևեց մոտ 110 տարի՝ 10-րդ դարի 20-ական թվականներից մինչև 11-րդ դարի 30-ական թվականները: Երկարամյա այս խաղաղ շրջանում Հայաստանի տնտեսական կյանքը իր վերելքն ապրեց: Հայաստանում առաջացան մի շարք առևտրական քաղաքներ, որոնք արդյունաբերական և արհեստագործական արտադրության հիմնական կենտրոններ դարձան՝ Անի, Դվին, Խլաթ, Կարս, Արծն, Վան և տասնյակ այլ քաղաքներ: Ըստ Ստեփանոս Ասողիկի տեղեկության, ագարակները ավանների վերածվեցին, իսկ ավանները՝ բազմամարդ և հարուստ քաղաքներ դարձան: Խոշոր չափով զարգացավ տարանցիկ առևտուրը. Արաբիան և Բյուզանդիան, որոնք թշնամի էին իրար հետ և առևտրական անմիջական հարաբերություններ չունեին, նախընտրում էին չեզոք Հայաստանում կատարել իրենց ապրանքների փոխանակությունը, իսկ այդ, իր հերթին, խթանում էր Հայաստանի տնտեսական կյանքի զարգացմանը և բարգավաճմանը: Տեղի մեծահարուստ տարրերը ոչ միայն գործուն մասնակցություն էին ունենում տարանցիկ առևտրի մեջ, այլև աշխատում էին կազմակերպել տեղական որոշ ապրանքների արտադրությունը և վաճառքը: Հայաստանի քաղաքներում արհեստավորական տարրը, գնալով, ավելի էր մեծանում և մասնագիտանում: Մատենագրական տեղեկություններից մեզ հայտնի է, որ Հայաստանի քաղաքներում գոյություն են ունեցել հարյուրից ավելի արհեստներ: Որոշ տեղերում կազմակերպվում են արհեստավորական համագործակցություններ. պատմական տեղեկություններ ունենք մենք Երզնկայի արհեստավորների համագործակցությունների, Անիի դարբինների, կոշկակարների, գդակ կարողների համագործակցունե-

րի մասին և այլն: Աստիճանաբար, արհեստագործությունը անջատվում է երկրագործությունից և կենտրոնանում քաղաքներում: Զգալի շահով կատարելագործվում է և արտադրության տեխնիկան: Գյուղատնտեսության մեջ սկսում է հողագործության եռադաշտ մշակումը: Սկսում են գործ ածել ձկնաբերական գութաններ: Անց են կացնում նոր ջրանցքներ և ընդարձակում ոռոգելի տարածությունները: Զարկ է տրվում տեխնիկական կուլտուրաների՝ բամբակի, վուշի, թթենու, խաղողի և այլ կուլտուրաների մշակությանը: — Ընդհանրապես, նախկինի համեմատությամբ, զգալի տեղաշարժեր են կատարվում թե՛ գյուղում և թե՛ քաղաքում:

Որոշ փոփոխություն է տեղի ունենում և հասարակության սոցիալական կազմում: Գյուղում ընդարձակվում և խորանում է ճորտացումը: Հայաստանի հյուսիսային շրջաններում գյուղացիությունը տեղ-տեղ ամրացվում է հողին, այսինքն՝ գյուղացին դառնում է ավատատիրոջ սեփականություն և չի կարող առանց նրա թույլտվության տեղափոխվել այլ տեղ: Ստեղծված նոր իրադրության մեջ իշխանները, ազատները, աստիճանաբար, տեղափոխվում են քաղաքները և մշտնում քաղաքի շրջակայության մեջ: Սաղմնային վիճակում ստեղծվում է քաղաքի այն տարրը, որն Արևմտյան նվորայայում հայտնի է «բուրգեր» անունով: Դրամի համը ճաշակած իշխանները գյուղացիների հարկերը, մեծ մասամբ, սկսում են պահանջել դրամով: Նկատվում է շինականների որոշ մասի հոսանքը՝ դեպի քաղաք: Առաջանում է ազատ վարձու աշխատող ձեռքը քաղաքում: Աստիճանաբար, խորանում են սոցիալական հակասությունները, առաջանում է մի կողմից ընչազուրկ բնակչության հսկա բազմություն, իսկ մյուս կողմից՝ Տիգրան Հոնենցի և Սամմադինի մակարդակի խոշոր մեծատներ, որոնք իրենց ժամանակի վաշխառուական կապիտալի (վաշխառուական դրամատիրության) ներկայացուցիչներն են: Գնալով ավելի է ծանրանում շինականների և քաղաքային ռաբիկների դրությունը. առաջանում են ժողովրդական լայն շարժումներ, որոնք հանդես են գալիս աղանդավորական քողի տակ:

Սա այս ամենը անհրաժեշտ համարեցի հիշել, ցույց տալու համար, թե ինչպես պատմական, հասարակական երևույթները կապված են իրար հետ և մեկը պայմանավորված է մյուսով, ինչպես հասարակության տնտեսական կյանքի հետ միասին, փոխվում են նաև սոցիալական և արտադրական հարաբերությունները, դրա հետ միասին հասարակական հոգեբանությունը, իրավունքի և բարոյականության սահմանները և այլն:

Հարց է առաջանում՝ ինչպե՞ս որակել 10—13-րդ դարերում Հայաստանում ստեղծված այս իրադրությունը, ի՞նչ կարգի հասարակության հետ գործ ունենք մենք: Ակադ. Մանդլյանի, պրոֆ. Մ. Աբեղյանի, պրոֆ. Մկրյանի և պրոֆ. Վ. Զալոյանի կարծիքով, ավատական հասարակությունը այդ ժամանակ հասել էր իր զարգացման վերջին, ամենաբարձր աստիճանին, երբ ավատական հարաբերությունները սկսել էին տեղի տալ դրամատիրական հասարակության: Այսպես, պրոֆ. Աբեղյանի կարծիքով, 10-րդ դարում, շնորհիվ քաղաքների զարգացման և գյուղացիական ուժեղ շարժումների, սկսվում է ֆեոդալիզմի քայքայման ժամանակաշրջանը: Եվ քանի որ Վերածնունդը օրինաչափորեն հանդես է գալիս հասարակության զարգացման հենց այս ժամանակաշրջանում, ինչ տեղի է ունեցել արևմտաեվրոպական բոլոր երկրներում, ուրեմն, Հայաստանում ևս 10—13-րդ դարերում գոյություն է ունեցել Վերածնունդը: — Ահա թե գիտական ի՞նչ գետնի վրա է առաջ քաշվում Վերածննդի հարցը մեզ մոտ:



Այժմ ծանոթանանք գիտնականների այն փաստերի հետ, որոնք մատնացույց են անում Վերածննդի գոյությունը Հայաստանում: Սկսենք դպրոցներից:

Մինչև վերջին ժամանակները հայագիտության մեջ այն կարծիքն էր իշխում, որ 10—13-րդ դարերում աշխարհիկ գիտելիքներ տվող աշխի ընկնող դպրոցներ, ընդհանրապես, գոյություն չեն ունեցել. եղածները վանական դպրոցներ են եղել՝ նպատակ ունենալով գրչության արվեստ սովորեցնել և հոգևորականներ պատրաստել: Զարմանալի չէ, որ այնպիսի ականավոր հայագետ, ինչպիսին է Լեոն, խոսելով Անի քաղաքի մասին տվյալ ժամանակաշրջանում, ցավով գանգատվում է Անիից, որ նա մեզ հազար ու մեկ եկեղեցի տվեց և ո՛չ մի դպրոց: Մեր գիտնականները՝ դոց. Ա. Մովսիսյան և ուրիշները, պատմական անվիճելի նյութերի հիման վրա ցույց տվեցին, որ Անին, տվյալ ժամանակաշրջանում, ունեցել է ո՛չ միայն դպրոց, այլև բարձրագույն ուսումնական հաստատություն, որը կոչվել է բարձրագույն ուսումնարան: Անիի այդ ուսումնարանում դասավանդվել են գիտական այնպիսի առարկաներ, ինչպիսիք են փիլիսոփայությունը, տիեզերագիտությունը, տոմարը, մաթեմատիկան, ճարտասանությունը, քերականությունը և այլն: Այդ դպրոցի հիմնադիրներից մեկն է հանդիսացել Հովհաննես Սարկավազ իմաստասերը, որի ղեկավարած ուսումնարանում դասախոսել են անգամ «ղառակոխ» բանս

Արիստոտելի և զթուականաշափ խտրոցս փխրելիս:

Հովհաննես իմաստասերի այս բարձրագույն ուսումնարանը պատրաստում է բազմակողմանի զարգացած մասնագետներ, որոնք վերադառնալով իրենց ծննդավայրերը, ուսուցչություն էին անում և հայագիտությանը զբաղվում. նրանք խոշոր գործ կատարեցին հայ մատենագրության զարգացման ուղղությամբ: Ուշադրության արժանի է այն գնահատականը, որ տալիս է Հովհաննես իմաստասերի կենսագիրը նրա ուսումնարանին. «Ելին յարմատոյ և շառաւելէ նորին բարունակք յոգնապատուը, ուսուցիչք և լուսաւորք ոգւովք, աստեղք անմուրաք և ջահք լուսաթաղանթք, և լցին զտիեզերս բանիւն կենաց և իմաստայեղց տրամախոհ ներհունական իմաստիւք»:

Ավելի ուշ, 14—15-րդ դարերում, երբ հայ ժողովուրդը խոշոր վայրկեաններ ապրեց, Հովհաննես իմաստասերի այդ դպրոցը իր պատվավոր դերը շարունակեց կատարել նախի նշեցու, Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու ղեկավարած Սյունաց դպրոցով Սյունյաց լեռներում: Ձեռագիր հիշատակարաններում Գլաձորի դպրոցն արդեն հիշվում է ոչ թե դպրոց, այլ «համալսարան» անունով կամ «երկրորդ Աթէնք և մայրաքաղաք ամենայն իմաստից» և այլն: Ի դեպ, Սյունյաց դպրոցում գալիս և սովորում էին Հայաստանի բոլոր շրջաններից, նույնիսկ հեռավոր Կիլիկիայից:

10—13-րդ դարերում աննախընթաց զարգացման է հասնում հայ գեղարվեստական գրականությունը: Հանդես են գալիս այնպիսի հանճարեղ բանաստեղծներ, ինչպիսին Գրիգոր Նարեկացին է: Նարեկացու «Մատենան ողբերգութեան»-ը և մյուս բանաստեղծությունները, թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ, նորություն էին բերում հայ գրականությանը: Նարեկացին իր այդ երկերում տալիս է մարդու և բնության հումանիստական արժեքավորումը, ինչպես շատ ճիշտ նկատել է պրոֆ. Մ. Աբեղյանը: Վերջինիս կարծիքով, Նարեկացին իր այդ ողբերգությամբ, ձգտում է իդեալական մարդու կերպարին, իր խոսքով ասած՝ ցանկանում է միանալ Աստծու հետ, ձուլվել աստվածային լույսի մեջ:

Վերածննդի ցայտուն արտահայտիչներից է նաև Ներսես Շնորհալին, որի «Ողբ Նդեմիոյ» պոեմը ուսուցողական գործ կարելի է համարել: Հայ տաղերգությունը սկսում է աշխարհականանալ. բանաստեղծության նյութ են սկսում դառնալ գարունը, հայրենիքը, կանացի գեղեցկությունը, սերը և այլն: Սկիզբ է դրվում գեղարվեստական արձակին: Առաջին անգամ Մխիթար Գոշի, Ներսես Շնոր-

հալու և Վարդան Այգեկցու կողմից գրի են առնվում ժողովրդական առակները և առածները, ուր սուր ծաղրանքի են ենթարկվում անիրավությունը, շահամոլությունը, անբարոյականությունը, տգիտությունը և հասարակական այլ արատներ: Առակների որոշ մասը մեզ հիշեցնում է Բուկալիոյի Դեկամերոնը (Տասնօրյակը): Հանդես են գալիս այնպիսի բանաստեղծներ, ինչպիսին Յրիկն է, որը դուրս գալով միջնադարյան խավարի երկաթյա կապանքներից, համարձակվում է անգամ քննադատել Նախախնամության երկրի վրա գոյություն ունեցող սոցիալական անհավասարության համար:

«Մէկն ի պապանց պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրող լինի.
Մէկին հազար ձի ու շորի,
Մէկին ո՛չ ու մի, ո՛չ մաքի:

Մէկին հազար կապիճ ոսկի,
Մէկին ո՛չ փող մի պրղնձի.
Մէկին հազար հատ մարգարտի,
Մէկին ո՛չ հուլնիկ ապակի:

Մէկին հազար գունով մաքի,
Մէկին ո՛չ մեկ շորքոտանի.
Մէկին բեհեղ և ծիրանի,
Մէկին բրդէ շալ մի լընկին»:

Պրոֆ. Մ. Աբեղյանի կարծիքով, հին և նոր գաղափարախոսության, իրավագուրկ ճորտի և բնության ազատ մարդու աշխարհայացքի պատկերավոր հակադրությունը տրված է Հովհաննես իմաստասերի «Մարյակ»ի մեջ, որին նա համարում է «Մեր Վերածնության նոր աստվոր հոսանքի առաջին արտահայտիչներից մեկը»:

Վերածնության հարցի ուսումնասիրողներն առանձնապես բարձր են գնահատում Կոստանդին Երզնկացու տաղերը: Ռուսականավոր գրող Վալերի Բրյուսովը հիացմունքով է խոսում Երզնկացու «Փարուն» բանաստեղծության մասին և գտնում է, որ այդ՝ Վերածննդի որակի արտադրանք է, և որ եվրոպացիները ժամանակակից երկերից հավասարվող ոչինչ չեն կարող դնել նրա կողքին:

Պրոֆ. Նուցուրիձեի կարծիքով, Կոստանդին Երզնկացու երկերում արտացոլված է ո՛չ միայն արևելյան Վերածննդի սովորական զարգացումը, այլ նրա բարձր աստիճանը, որին նա կարող էր հասնել միայն 14-րդ դարում:

Տվյալ ժամանակաշրջանում, ինչպես ասացուցել են հանգուցյալ Գրեգին կաթողիկոս Հովսեփյանը, օրիորդ Սիրարիի Տեր-Ներսիսյանը և հայ մանրանկարչության քահանուհի մասնագետ Լ. Ա. Դուռնովան, ան-

նախընթաց չափով զարգանում է մանրանկարչությունը: 10—13-րդ դարերի հայ մանրանկարչությունը իր ձևով, կատարողական արվեստով և գեղարվեստական կատարելությամբ, այլ որակ է, քան նախորդ շրջանի մանրանկարչությունը: Թորոս Ռոսլինը, Սարգիս Պիծակը և Ժամանակակից մյուս մեծատաղանդ մանրանկարիչները, որոնք հայ մանրանկարչության դպրոցի պարծանքն ու հպարտությունն են կազմում—Վերածննդի շրջանի մանրանկարիչներ են: Նրանց մանրանկարներում դուր տեսնում եք ինքնատիպ նուրբ և հրաշագեղ երանգներ, Ժանրային ընդարձակ տեսարաններ, խորությունն արտահայտելու վարպետ արվեստ: Մանրանկարչության մեջ, հատկապես խորանների վրա, գլխավոր դերում և լուսանցազարդում, նկարում են թռչուններ, կենդանիներ և այլ նկարներ ունալ բնությունից: Ըստ որում, նկարում են կենդանիները և թռչունները ո՛չ թե քարացած վիճակում, այլ շարժման մեջ:—Ահա՛ ձեզ խորանի վրա նկարված երկու աքաղաղներ, որոնք պատրաստվում են իրար վրա հարձակվել— ա՛յնքան բնական են նկարված նրանք, այնքան հաջող է տրված նրանց շարժումը, որ նկարներին նայելիս, սպասում ես, որ այդ թռչունները պիտի հարձակվեն իրար վրա և բզկտեն իրար: Ընդհանրապես, շարժումը տվյալ Ժամանակաշրջանի մանրանկարներում տրվում է բացառիկ վարպետությամբ: Աշխատում են մարդկանց պատկերը վերարտադրել հարազատորեն. նկարին նայելիս դուք տեսնում եք ո՛չ միայն մարդը իր հարազատ արտաքինով, տիպիկ զգեստներով, այլև մարդը՝ իր ներքին աշխարհով. նկարի վրա դուք կարդում եք մարդու զգայունությունը, նրա ապրումները, մի խոսքով՝ դուք ձեռք առնել տեսնում եք այն արվեստը, ինչ բնորոշ է իտալական Վերածննդի ականավոր նկարիչներ Ռաֆայելի, Լեոնարդո դա Վինչիի և մյուսների համար: Արվեստի վաստակավոր աշխատող Լ. Ա. Դուռնովան «Հին հայկական մանրանկարչություն» ակումբի ներածության հոդվածում գտնում է, որ Կիլիկիայի հայ մանրանկարիչները, առանձնապես Ռոսլինը, առաջ են քաշել և լուծել այնպիսի հարցեր, որոնք հետագայում մշակվել են միայն Վերածննդի Ժամանակ: Նրա կարծիքով, Ռոսլինը ճառաջին հաստատուն քայլերն է արել Վերածննդյան դարաշրջանի արվեստի ուղղությամբ: Դժբախտաբար, հայ մանրանկարչության գլուխ գործոց շատ կոթողներ դեռ լավ չեն ուսումնասիրված. մենք համոզված ենք, որ հայ մանրանկարչության պատմությունը դեռ շատ ասելիքներ ունի:

10—13-րդ դարերում զգալի տեղաշարժեր են կատարվել նաև բժշկական գիտության

ասպարեզում: Հայ բժշկության պատմության ականավոր մասնագետներ պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանի, պրոֆ. Խ. Ա. Մելիք-Փարսադանյանի և մյուսների կարծիքով, 10—11-րդ դարերում «ձևավորվել և ամուր հաստատվել է բժշկության աշխարհիկ ուղղությունը»: 10—11 դարերում, առանձնապես հայ տաղանդավոր բժիշկ Մխիթար Հերացուց հետո, որի «Ջերմանց մխիթարություն» աշխատությունը, գրված 1184 թվականին, հասել է մեզ և հրատարակված է հայերեն, ռուսերեն և գերմաներեն լեզուներով և իր Ժամանակի բժշկական գիտության գլուխ գործոցներից մեկն է:

Հակառակ միջնադարյան բժշկության մեջ գերիշխող դոգմատիկայի և սխոլաստիկայի, ինչպես ապացուցում են հայ բժշկության պատմությամբ զբաղվող մեր մասնագետները, հայ բժիշկները առաջ են քաշում արտաքին միջավայրի ազդեցության խնդիրը. նրանց տեսակետով, հիվանդության պատճառը միայն օրգանիզմի ներսը չպիտի փնտրել, այլև դրսում, քանի որ հիվանդությունները թափանցում են մարդու օրգանիզմի մեջ նաև դրսից և պատճառ են դառնում հիվանդության:

Հայ բժիշկները, հատկապես Մխիթար Հերացին, բողոքում են բժշկության մեջ արմատացած վնասակար այն սովորության դեմ, երբ բուժման նպատակով հիվանդներից անխտիր արյուն են առնում: Նրանց կարծիքով, երբ հիվանդը հյուծված է, չպետք է արյուն առնել, այլապես այդ մահվան պատճառ կարող է դառնալ:

Մխիթար Հերացին և Ժամանակակից մյուս հայ բժիշկները, հետևելով Հիպոկրատի ուսմունքին, առաջարկում են բազմակողմանի ուսումնասիրել հիվանդին և ապա սկսել բուժումը: Ըստ որում, ջերմախտով հիվանդին բուժելիս առաջարկում են քննել և պարզել, թե մարմնի ո՞ր մասն է ցավում, ի՞նչ բարդություն է տվել հիվանդությունը, ի՞նչ կարիք ունի հիվանդը, ինչպիսի՞ն է տվյալ երկրի կլիմայի առանձնահատկությունը, տարվա ո՞ր եղանակին է հիվանդացել, ո՞րն է հիվանդի ծննդավայրը, ինչպիսի՞ն են նրա սովորությունները, և ապա մշակել բուժման կարգը ըստ պատշաճության:

Հայ բժշկության մասնագետների կարծիքով (բժիշկ Ա. Կծոյան և ուրիշները) տվյալ շրջանում զգալի առաջադիմություն է կատարվել նաև վիրաբուժության ասպարեզում. սառը զենքի կտրած վերքերը կարելիս օգտագործել են մետաքսի թելը, որոշ դեպքում, վիրահատումից առաջ հիվանդին տվել են նարկոզ (թմրեցնող, քնեցնող նյութ), խորը վերքերի դեպքում թողել են պատրուկի (գրենաժի) տեղ, կատարվել են այնպիսի բարդ

օպերացիաներ, ինչպիսին Կեսարյան հեր-
ձումն է, պտղահանումը, պտղաշրջումը և
այլն: Մատենագրական տեղեկություններից
հրեում է, որ օրենքով թույլատրված է եղել
հանցագործության մեջ մեղադրված և սպա-
նության դատապարտված մարդուն հերձել՝
նրա ներքին օրգանները մոտից ուսումնասի-
րելու համար:

Մեզ են հասել բազմաթիվ օրիգինալ և
թարգմանված ձեռագիր բժշկարաններ և
«խրաբատի»ներ (դեղագրության տեքստ-
տեր), ուր ամփոփված են անգնահատելի
նյութեր բժշկության պատմության համար:
Նրանք բովանդակում են արևելյան ժողո-
վուրդների ողջ իմաստությունը գիտության
տվյալ ասպարեզում: Այդ տեքստերում մաս
և բաժին ունեն ինչպես հայ, այնպես և արաբ,
հույն, ասորի և հրեա բժիշկները: Հայ բժիշկ-
ներին ծանոթ են եղել և օգտվել են համաշ-
խարհային հռչակ ունեցող հույն և արաբ
այլախի բժիշկներից, ինչպիսիք են՝ Հիպո-
կրատը, Աբու-Ալի Իբն-Սինան, Ար-Րազին,
Դիոսկորիդեսը, Ասկլեպիադեսը, Հոմայն
բին-Իսակը, Մուհամեդ բին-Ջաֆարիան և
ուրիշները:

Հայ ճարտարապետությունն ևս տվյալ ժա-
մանակաշրջանում գտնվել է իր Վերածննդի
շրջանում: Հայ ճարտարապետության նշա-
նավոր մասնագետ Թորոս Թորամանյանի
կարծիքով, 10—13-րդ դարերի հայ ճարտա-
րապետության հուշարձանները, իրենց բնույ-
թով, իրենց կառուցողական արվեստով և շքե-
ղությամբ, զգալի նորություններ են բերում
գիտությանը: Այդ շրջանում եկեղեցական
ճարտարապետության կողքին մենք տեսնում
ենք նաև աշխարհիկ բնույթի շենքեր: Հայտ-
նի է, որ ակադ. Մառի պեղումների ժամանակ
Անիում բացահայտվել են հյուրանոցներ,
բաղնիք և պալատական շենքեր: Այս շրջանում
կառուցվել են մի շարք բերդեր, ծածկած շու-
կաներ, իջևանատներ: Ներքին և արտաքին
առևտրի զարգացումը անհրաժեշտ է դարձրել
Հայաստանի վրայով անցնող գլխավոր խճու-
ղիների վրա նաև կամուրջների շինարարու-
թյունը: Թորամանյանի կարծիքով, այս շրջ-
անի ճարտարապետական կոթողները, որոնք
նա համարում է Վերածննդի երկրորդ շրջանի
կոթողներ, աչքի են ընկնում իրենց արտաքին
ձևավորումով. շինարարության պատերը սո-
վորաբար զարդարվում են նուրբ և գեղեցիկ
քանդակավոր աղեղով պսակված որմնասյու-
նով:

Այս շրջանի հայ ճարտարապետության մա-
սին խոսելիս, առանձնապես անհրաժեշտ է
նշել Հայաստանում ստեղծված ճարտարա-
պետության գոթիկ ոճը, որը հետագայում
ընդօրինակվեց Արևմտյան Եվրոպայում և
լայն տարածում գտավ այնտեղ: Հայ ճար-

տարապետության՝ Արևմտյան Եվրոպայի
ճարտարապետության վրա թողած այս ազ-
դեցությունն ընդունում են ճարտարապետու-
թյան պատմության գրեթե բոլոր լուրջ մաս-
նագետները:

Տվյալ ժամանակաշրջանում նոր երևույթ է
նկատվում Հայաստանում նաև փիլիսոփա-
յական գիտության ասպարեզում: «Արտաքին»
կոչվող գիտունների աշխատությունները,
որոնց մի մասը 6—7-րդ դարերում թարգ-
մանվել էր հայերեն, բայց մոռացության
տրվել հետագայում, այժմ նորից հրապա-
րակ են դալիս. անտիկ փիլիսոփաների երկե-
րը ընդօրինակվում են, մեկնվում և դասա-
խոսվում հայկական դպրոցներում և ուսում-
նարաններում: 12-րդ դարում վերամշակվում
և բազմաթիվ օրինակներով ընդօրինակվում
են Արիստոտելի, Պորփյուրի, Պյութագոր-
յան, Սոկրիկյան և նեոպլատոնական փիլի-
սոփաների աշխատությունները: Գրվում են
նաև փիլիսոփայական ինքնուրույն աշխա-
տություններ (Գրիգոր Մագիստրոս, Հովհան-
նես Սարկավազ իմաստասեր, Վահրամ Ռա-
բունի, Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի
և ուրիշները):

Փիլիսոփայության պատմության մասնա-
գետներն առանձնապես մեծ նշանակություն
են տալիս Հովհաննես Սարկավազի առաջ
քաշած տեսությանը՝ փորձի մասին: Մարդ-
կային իմացությունը, ըստ Հովհաննես ի-
մաստասերի տեսության, ստեղծվում, կազ-
մավորվում է շրջապատից ստացած տպավո-
րություններից, զգացողություններից, որոնց
հավաստությունը ստուգելու միակ հուսալի
աղբյուրը փորձն է—փորձի հիման վրա կա-
րելի է ստուգել ներքնկալված այս կամ այն
երևույթի ճշտությունը կամ սխալ: Ինչպես
հայտնի է, փորձի առաջ քաշումը եվրոպա-
կան Վերածննդի բնորոշ հատկանիշներից
մեկն է համարվում. փորձը որպես իմացու-
թյան վստահելի աղբյուրը ընդունվեց Արև-
մտյան Եվրոպայում Հովհաննես Սարկավա-
զից մի քանի դար հետո միայն:

Տվյալ շրջանում Հայաստանում սկսում են
նոր թափով զարգանալ նաև տիեզերագիտու-
թյունը, տոմարագիտությունը և բնական գի-
տությունները:

Հովհաննես Սարկավազի գիտական մաս-
նագիտության մասին խոսելիս մենք արդեն
ասել ենք, որ Հայկական տոմարը հիմնովին
բարեփոխության ենթարկվեց 1084 թվակա-
նին—Հայկական շարժական տոմարը անշարժ
դարձվեց, հայկական թվականից դուրս ար-
վեց նահանջ տարին, որ կուտակվել էր շրս
տարին մեկ օր հավաքված նահանջ օրերից,
ճշտվեցին վերադիրը, տարեդիրը, լուսնա-
ցույցը և տոմարագիտական այլ հաշիվներ:

Նույն հեղինակը, հետևելով անտիկ մաթեմատիկոսների ուղղությունը (Նիկոմախի, Փիլոնիև և այլն), կազմել է իր «Ցաղագս անկիւնատր թուոց» աշխատությունը, որի գիտական արժեքը մաթեմատիկայի պատմության մեջ բավականաչափ մեծ է։ Այս մասին մենք դարձյալ խոսել ենք մեր նախորդ դասախոսության մեջ և չենք ուզում կրկնել։

Գիտական կարևոր երևույթ է Գրիգոր Մագիստրոսի կողմից էվկլիդեսի երկրաչափության հունարենից հայերեն թարգմանվելը, որի անհրաժեշտությունն անշուշտ զգացվում էր մեզ մոտ։

10—13-րդ դարերում սկսել են ուշադրություն դարձնել նաև տիեզերագիտության և աշխարհագրության վրա, փորձել են ուսումնասիրել երկրի և տիեզերքի գաղտնիքները։ Մեզ են հասել Հովհաննես Նրզնկացու, Ներսես Շնորհալու և այլ հեղինակների տիեզերագիտական աշխատությունները, որ քրիստոնյան են առնված բնության բազմաթիվ երևույթների՝ ձյան, անձրևի, կարկտի, եղյամի, կայծակի, որոտի և այլ բնական երևույթների առաջացման պատճառները։

Մեզ համար երկրորդական նշանակություն ունի իհարկե այն հարցը, թե նշված աշխատությունների մեջ միջնադարյան հայ գիտնականները ո՞րքանով ճիշտ են բացատրել բնական այս կամ այն երևույթը և նրա առաջացման պատճառը։ Կարևորն այն է, որ նրանք, համակված ժամանակի առաջադեմ նոր գաղափարներով, փորձել են անում հարցեր դնելու, քննության առնելու բնությունը և նրա երևույթները, փորձում են որոնումներ կատարել՝ ճշմարտություններ գտնելու ակնկալությամբ։— Իսկ այդ՝ Վերածննդի ներկայացուցիչների բնորոշ հատկությունն է։

Եվ, վերջապես, Վերածննդի կարևոր հատկանիշներից մեկն էլ սոցիալական շարժումներն են հանդիսանում։ Միջին դարերում նրանք, ինչպես հայտնի է, հանդես են եկել աղանդավորական քողի տակ։ Մեզ մոտ այդ շարժման կրողները հանդիսացան պավլիկյան և թոնդրակյան գաղափարախոսության հետևորդները, որոնք լայն տարածում գտան ինչպես Հայաստանում, այնպես և նրա հարևան երկրներում։ Թոնդրակյան շարժման հետևորդները դեմ էին պատական կարգերին և նրա պաշտոնական գաղափարախոսությանը։ Հայտնի է, որ բյուզանդական կազմակերպված բանակներին դժվարությամբ հաջողվեց շարժել պավլիկյան և թոնդրակյան շարժման հետևորդների դիմադրությունը։ Հետագայում, ինչպես գիտեք, պավլիկյան և թոնդրակյան գաղափարախոսությունը կարեւոր հոդ գտավ Թրակիայում, Մակեդոնիայում։ Հայաստանում սկիզբ առած աղանդավորական այդ շարժումը սլավոնական երկր-

ներում տարածվեց և հայտնի էր «հայկական աղանդ» անունով, Իտալիայում՝ «կաթերների շարժում» անունով, Ֆրանսիայում՝ «ալբիգյանների շարժում» անունով և այլն։ Նա տարածվեց նաև Բուլղարիայում։ Գիտնականներից ոմանք թոնդրակյան շարժման հետ են կապում անգամ բողոքականությունը։

10—13-րդ դարերում գիտության, գրականության, արվեստի, ճարտարապետության զարգացման մասին կարելի է շատ խոսել և շատ փաստեր բերել, բայց մենք հարկադրված ենք սահմանափակվել ժամանակի սղության պատճառով։

Բերված այս փաստերը ի՞նչ են ապացուցում։— Պրոֆ. Մ. Աբեղյանի, պրոֆ. Վ. Չալոյանի, պրոֆ. Մ. Մկրյանի և նրանց հետևող գիտնականների կարծիքով, այս բոլորը ցույց են տալիս, որ Հայաստանը տվյալ դարերում ապրել է Վերածննդի շրջան։ Այս գիտնականները գտնում են, որ Վերածննդը, առհասարակ, արևելյան ժողովուրդների մոտ ավելի կանուխ է բուրգվել, քան Եվրոպայում։ Ինչ վերաբերում է Արևմտյան Եվրոպային, ապա ինչպե՞րով ենք մենք արևելյան Վերածննդը Եվրոպա փոխադրող հիմնական խոդովակը։

Թյուրիմացություն չստեղծելու համար, ես պետք է նորից կրկնեմ դասախոսության սկզբում արած իմ նախազգուշացումը, որ Հայրենիքի ո՛չ բոլոր պատմաբանները, փիլիսոփաները և գրականագետներն են, որ ընդունում են պրոֆ. Մ. Աբեղյանի և մյուսների առաջադրած այս տեսությունը։ Նրանք գրում են, որ հարցը դեռ կարոտ է խորը և բազմակողմանի ուսումնասիրության։ Ընդունելով գիտության, գրականության և այլ բնագավառների զարգացումը տվյալ ժամանակաշրջանում, Վերածննդը ժխտող գիտնականները այդ ամենը համարում են ո՛չ թե Վերածննդի շրջանի, այլ ավատական զարգացած շրջանի մշակույթ։ Նրանք ընդունում են, իհարկե, որ 10—13-րդ դարերի զարգացման ընթացքը, իրոք, տանում էր դեպի Վերածննդ, սակայն գտնում են, որ այդ տեղի չունեցավ, որովհետև սելջուկյան և մոնղոլական աշխարհավեր արշավանքները խզեցին նրա բնական ընթացքը, քանդեցին հայկական քաղաքները և ամեն ինչ տակնուվրա եղավ։



Վերածննդի հարցի հետ սերտորեն կապված է 5-րդ դարի, կամ, ինչպես ընդունված է ձեռք մոտ ասել՝ «հայկական ոսկեդար» խընդիրը, որի մասին ես ուզում եմ երկու խոսք ասել։ Ձեր հրատարակած հայագիտական գրականությունը ողողված է ոսկեդարյան պիտակներով՝ «ոսկեդարյան պատմիչներ», «ոսկեդարյան մատենագրություն», «հայկա-

կան ոսկեդար» և այլն: Պետք է ասել, որ 5-րդ դարին տրված նման բնորոշումը տարիներ առաջ տեղ է գտել մեր որոշ հայագետների աշխատություններում: Սակայն այս բնորոշումը մեզ մոտ ենթարկվեց իրավացի քննադատության: Ես գիտեմ, ձեզանից ոմանք դժգոհ են այդ քննադատությունից, և չեն ուզում համաձայնվել: Սակայն, իմ կարծիքով, այդ գիտնականները, եթե սառը, անկողմնակալությամբ մոտենալու լինեն փաստերին, չեն դժգոհի: Այս կապակցությամբ ես ցանկանում եմ մատնացույց անել մի քանի փաստեր, որոնց կողքից, կարծում եմ, անտարբեր չի կարելի անցնել.

ա) Ինչպես կարելի է 5-րդ դարը համարել հայ ժողովրդի ոսկեդար, երբ նա մեր պատմության ամենածանր, ամենամղձավանջալի դարերից մեկն է հանդիսացել: Հայտնի է, որ 5-րդ դարում մենք կորցրեցինք մեր քաղաքական անկախությունը և օտար լծի տակ ընկանք: Մեր ժողովուրդը 5-րդ դարում կյանքի ու մահու կռիվ էր մղում իր ֆիզիկական գոյության համար—մի՞թե կարելի է նման դարը իդեալականացնել և ոսկեդար անվանել:

բ) Ավանդական տեսակետի հետևողները 5-րդ դարը ընդունելով ոսկեդար, հաջորդ դարերի վրա նայում են որպես անկման դարեր, կամ, ինչպես իրենք են անվանում, «ցեխի դարեր»— մի որակում, որ հիմնովին սխալ է, քանի որ 5-րդ դարին հաջորդող դարերում է, որ փայլել է սկսում մեր մատենագրությունը. ինչպե՞ս կարելի է «ցեխի դար» անվանել 6-րդ դարը, երբ այդ դարում ստեղծվում է մեր փիլիսոփայական լուրջ գրականությունը, կամ «ցեխի դար» անվանել 7-րդ դարը՝ անանիա Շիրակացու գիտական հետազոտությունների բեղուն դարը և այլն:

գ) Ոսկեդարի որակումը ենթադրում է մի ժողովրդի մշակութային, սոցիալական և քաղաքական կյանքի զարգացման գագաթնակետը: Ինչպե՞ս կարելի է համաձայնվել, որ 5-րդ դարը մեր մշակութի գագաթնակետն է հանդիսացել, իսկ այնուհետև մեր ժողովուրդը ստեղծագործական ինչ-որ անկում է ապրել:

դ) Եվ, վերջապես, կան հայագետներ, որոնք 5-րդ դարը ոսկեդար անվանելով, ցանկանում են առանձնապես նշել այդ դարի հայկական գրադար լեզուն, որպես մեր ամենամաքուր, բյուրեղ գրական լեզուն: Բայց այդ ևս սխալ է, քանի որ մեզ համար գրադարից պակաս արժեք չունի և աշխարհիկ լեզուն, որին մեր պաշտոնական մատենագիրները անարդարացի ձևով «գռեհիկ», «շինական» որակում են տվել:

Այնպես որ՝ հարցին մենք ի՞նչ տեսանկյունով էլ մոտենալու և քննելու լինենք, 5-րդ

դարի նման որակումը սխալ է: Այդ սահմանումով մենք իդեալականացնում, երկինք ենք բարձրացնում 5-րդ դարը, իսկ իրենցում, ցեխին ենք հավասարեցնում մեր ժողովրդի մյուս դարերում ստեղծած ինքնատիպ արժեքները: Ահա թե ինչու Հայրենիքի մեր հայագետները, մեր համոզմամբ, իրավացի են, երբ չեն համաձայնվում ավանդական տեսակետի հետ և քննադատության են ենթարկում 5-րդ դարի այս «ոսկյա» առասպելը:



Պատասխաններ մի հարցի ես և վերջացնենք: Մենք մեր դասախոսության մեջ րեքիցինք Հայաստանում Վերածննդի գոյությունը ընդունող գիտնականների հիմնական փաստերը, ինչպես և նրանց դեմ եղած առարկությունները: Այս տեսակետներից, վերջի վերջո, ո՞րն է ճիշտը,— կհարցնեք դուք, այլ խոսքով ասած, տվյալ հարցում ի՞նչ տեսակետ եմ պաշտպանում անձամբ ես: Դժվար է ինձ պատասխանել ձեզ, որովհետև այս հարցով, ինչպես ասացի, ես մոտից չեմ զրադվել: Բոլոր դեպքում, հարցադրումը ես համարում եմ շահեկան և հետաքրքիր:

Ինչպես հայտնի է, արևմտահայկապական պատմաբանները, տասնամյակներ շարունակ այն կարծիքն են ստեղծել ու արմատավորել գիտության մեջ, որ վերածնունդը— արևմտահայկապացիների անբաժանելի ժառանգությունն է, իսկ արևելյան ժողովուրդները՝ մաս ու բաժին չունեն նրա մեջ: Եվ, ահա, մեր գիտնականներից ոմանք՝ պրոֆ. Մ. Աբեղյանը, Չալոյանը և մյուսները, հայկական նյութերի հիման վրա, աշխատում են հակառակն ապացուցել, փորձում են քանդել տասնամյակների շարժված ծեփը և նրա տակ թաքնված այլ շերտ փնտրել: Այդ, անվիճելի, դրական աշխատանք է:

Սակայն, մեր կարծիքով, ուսումնասիրություններն ավելի մեծ արդյունք կտային, եթե Վերածննդի միջավայրի շրջանակներն Արևելքում ավելի ընդարձակվեին: Վերջի վերջո, Հայաստանը չինական ինչ-որ պարսպով կտրված, անջատված չի եղել իր շրջապատից՝ հարևան Վրաստանից, Ադրբեջանից, Արաբիայից, Պարսկաստանից, Հնդկաստանից, Չինաստանից և արևելյան մյուս երկրներից: Արևելյան ժողովուրդների մշակույթը ընդհանուր շատ կողմեր ունի. երբեմն արևելագետը դժվարանում է որոշել գիտական, գրական և կուլտուրական այս կամ այն նորարարության ճշգրիտ վայրը և սահմանը Արևելքում, որովհետև շատ երկրներ ընդհանուր են եղել Արևելքի մեր մի շարք ժողովուրդների համար: Չափի մոռանալ, որ Գրիգոր Նարեկացու, Հովհաննես Սարկավազի, Ներսես Շնորհալու, Կոստան-

դին նրզնկացու և վերե հիշատակածս մյուս մատենագիրների դարաշրջանում է, որ փայլում էր արաբական ակադեմիան Բաղդադում, այդ շրջանում է, որ հանդես են գալիս անգղազական այնպիսի դեմքեր, ինչպիսին Շոթա Ռուսթավելին է, նիզամի Գյանջևին, Խաքանի Շիրվանին, Ալիշեր Նավոյին և մյուսները: Ուստի և ցանկալի է, որ մեր արևելագետները ձեռք-ձեռքի տված զբաղվեն այս կարևոր հարցի լուսաբանությամբ:

Օգտվելով բարեպատեհ առիթից, որ գտնվում էմ արաբական աշխարհում, ես կուզենայի մեր արաբագետ մասնագետների ուշադրությունը հրավիրել այս կարևոր հարցի վրա, կուզենայի, որ նրանք, մեր կովկասագետ մասնագետների հետ ձեռք-ձեռքի տված, աշխատեն մեր արևելյան ժողովուրդների մշակույթի այս կարևոր հարցի լուսաբանության վրա: Պետք չէ, իհարկե, հարցին մոտենալ միտումնավոր ձևով, արևմտանվրուպական պատմաբանների սկսածի հակառակ ծայրից և թթու հայրենասիրությամբ. հարցը պիտի քննել գիտականորեն, անկողմնակալ ձևով— ապացուցել այն, ինչ իրողություն է: Մենք համոզված ենք, որ եթե մեր արևելագետներին չհաջողվի անգամ համոզեցուցիչ

ձևով ապացուցել Վերածննդի գոյությունը Արևելքում, գոնե վերջնականապես կլուսաբանվի, կպարզաբանվի՝ թե Վերածննդի ի՞նչ ի՞նչ տարրեր Արևելքից են տարված Արևմուտք և արևմտանվրուպացիների ստեղծած Վերածննդի հիմնաքարերից որո՞նք արևելյան ծագում ունեն: Անվիճելի է, որ արևելյան ժողովուրդների հայտնագործությունները ոչ միայն հիմք դարձան եվրոպական Վերածննդի համար, այլև հզոր թափ հաղորդեցին նրան:

Վերջացնելով իմ դասախոսությունը, ես պիտի ասեմ, որ ինչքան էլ վիճելի կամ անվիճելի լինի Վերածննդի հարցը միջին դարերում Արևելքում, այդ թվում նաև Հայաստանում, սակայն մի բան մնում է անվիճելի, այն՝ որ մեր փոքրիկ ժողովուրդը, իր ծանր անցյալում, գաղթի, փոթորիկների և սրածովյան, արյան ծովի մեջ կարողացել է ստեղծագործել մնայուն արժեքներ:

Ամենախոր ակնածանքով ենք մենք վերհիշում անցյալի շնորհալի այն գիտնականների և մատենագիրների անունները, որոնց խիզախ մտահղացումները նպաստել են գիտության զարգացմանը և ծառայել մարդկային հասարակության զարգացման առաջընթացին:

